

գուցեալ եղբօր որդիները՝ Նիկողոս, Յակոբ և Անդրեաս, և կենդանի մնացողները Սարգիս, Աբրահամ և միւս Անդրեաս (ՄՁ. թ. 482): Նախնի հայ վարդապետներու ճառերը պարունակող ձեռագիր մը (ՄՁ. թ. 1105) յիշատակ կը մնայ Դաւիթ պարբ. Մերօրինցիէն, որ ստացողն կ'ըլլայ նոյն ձեռագրին, գրուած ՊՄԸ (= 1309) թուին, Ղազար կրօնաւորի մը ձեռքով Դարսնաղեաց գաւառին Աւագ վանքին Ս. Աստուածածին, Աբ. Առաքելոց և Ա. Կարապետ եկեղեցիներուն մէջ:

Սոյն ձեռագրին յիշատակարանին համաձայն եւս, Դաւիթ պարբ. ի ծնողաց և եղբայրներուն անունները կը յիշուին Միքայէլ Բաղիշեցի իր աշակերտէն, որ Հայէպի Ս. Աստուածածին և սբ. խ. մանկանց եկեղեցիին մէջ նորոգել կուտայ այս ձեռագրին կազմը ՌԾԷ=1608 ին: 1596 ին Խիզան ընդօրինակուած Ս. Գրոց ձեռագիր մը (ՄՁ. թ. 155), և դարձեալ 1622ին Խիզանի մէջ Կարապետ արեղայի ձեռքով գրուած Աւետարան մը (ՄՁ. թ. 179) Ս. Յակոբի վանքին յիշատակ կուտայ: Կը ձեռնագրուի եպս. 1576 ին, գահակալած է 1583ին և հրաժարած 1612 ին: Դաւիթ պարբ. օրով, Ս. Յակոբի վանքը ծանր պարտքի տակ կը մնայ. այնպէս որ ժամանակ մը սն կը հեռանայ Աթոռէն և Կապաստանի Եգեսիա, Սրապիոն եպօի. մօտ, և յետոյ կը վերադառնայ: Գրիգոր վրդ. Դարսնաղցին մանրամասն կը նկարագրէ վանքին անկեալ վիճակը (Դարսնաղցի. էջ 320-328):

Յովհաննէս Տէրզնցին քույր Հայոց Հոռփնց ստ Դաւիթ պարբ. շխարհ Հայոց Երուսաղիմի խորագրով թուղթ մը գրած է Դաւիթ պարբ. յարիարքին. Յովհաննէս քհ. ն Ամիրզի Տերզն կամ Տերզնի գիւղը ծնած է. կանուխէն կ'այրիանայ և իր եօթնամեայ Խաչատր կամ Խաչիկ տղեկը և իր երկու աղջիկները հետը առնելով կ'երթայ Հոռփ Ռիֆ (= 1583) թուին. անուննին ծանօթ հայերու կողմէն նամակ մը կը գրէ Դաւիթ պարբին. այս թուղթը զանազան տեսութիւններով շատ կարեւոր է, ուստի հոս կը դնենք անոր համառօտութիւնը: Թուղթին մէջ անունով յիշուած անձերը ասոնք են. Թարգոս Կոստանր, Առաքել, Մուրաւ, Յաղուպ, Միխայիլ, Խաչատր, Միրզաբաւ, Անտն և Դաւիթ: Տէրզնցին Դաւիթ պարբին, կուտայ սա տիտղոսը. Սրբոյն Յակոբայ Տեսնեղոր տեղապանիդ. վիկագոյն եւ պատուեալ անուն պարբ. շխարհ Երուսաղիմայ Տէր Դաւիթ պարբ. յարեւիկիդ. վերջին բառովս կ'ուզուի